

## ՄԱՐԻ ՄԱՄՅԱՆ

### ԳԻՐ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Հայ միջնադարյան թարգմանական գրականության մեջ բավականին մեծ տեղ են գրավում Հին ու Նոր Կտակարանների պարականոն կամ անկանոն գրքերը<sup>1</sup>: Այսպես կոչված ապոկրիֆ գրվածքների հայերեն թարգմանությունը սկսվել է դեռևս V դարում Ս. Գրքի թարգմանությունը գուգահեո<sup>2</sup>:

Պարականոնների թարգմանության ու ստեղծման գործընթացը շարունակվել է նաև հետագայում, սակայն որևէ լուրջ ուսումնասիրության չի արժանացել: Բ. Սարգիսյանն իր գրքի նախաբանում անդրադառնալով պարականոն գրվածքների ճակատագրին՝ գրում է. «Անվաւեր գրուածոց մասին եղած նախնի հարց, այսպէս նաև ԺՁ դարէն և այսր ուսումնասիրութիւնքն՝ կը գտնուէին դեռ իրենց նախկին սաղմի մեջ, զուրկ այն դրական ուղղութենէն և գիտական բազմակողմեան արդիւնքէն, վասն զի առաջիներն գրեթէ առհասարակ արհամարհոտ աչքով մը կը նայէին կամ բոլորովին անտես ըրին զանոնք ուսումնասիրել, և կամ լոկ իբրեւ մոլորեալ մտքերու ստայօդ և Ս. Գրոց հակառակ առասպելաբանութիւններ՝ հարեանցի յիշատակելով միայն բաւականացրէ են»<sup>3</sup>:

**XIX դարը, սակայն, շրջադարձային է եղել պարականոն երկերի ուսումնասիրության համար.** «Բայց ԺԹ դարն երկուքէն իսկ բոլորովին տարբեր աչքով սկսաւ դիտել անվաւեր գրուածները, տարբեր դրութեամբ ուսումնասիրել և տարբեր արդիւնքներ անոնցմէ յառաջ բերել: Այնքան կարևոր, այնքան ուշագրաւ եղած է այսօր այս տեսակ հնութեանց ուսումնասիրութիւնն յԵւրոպա, որ ազատ և անտարբեր բանասիրին առընթեր՝ մենք կը տեսնենք բազմաթիւ կրօնասէր և զգուշաւոր քննադատներ, և զոյգ ընդ բողոքական Ուսուցչին և հրէայ ռաբունոյն՝ նա և հարիւրաւոր ուղղադաւան աստուածաբաններ և մեկնիչներ,

<sup>1</sup> **Յ. Անայան**, *Մանր երկեր*, Լոս Անջելես, 1987, էջ 157, «Մատենագրութեան պատմութեան մէջ անկանոն կամ անվաւերական են անուանուտ այն գրվածքները, որոնք ընդհանուր առմամբ Աստուածաշնչի այսպես կոչված կանոնական (նախականոն եւ երկրորդականոն) գրքերի շարքից դուրս են մնում, այլ խոսքով՝ Հին եւ Նոր Կտակարանների կազմի կանոնականության վերաբերմամբ պարականոն եւ տարականոն հանդիսացող գրութիւններ են, որոնց նիւթերը կապված են Աստուածաշնչի դէպքերի եւ դէմքերի հետ կամ այնտեղից են բխում, եւ որոնք Աստուածաշնչի կանոնական գրքերի նմանողութեամբ են խմբագրուած»:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 158, պարականոնների թարգմանությունների ժամանակը մեծամասամբ անհայտ է, բայց, լեզվական հատկանիշներից դատելով, նրանց մի մասը պատկանում է 5-րդ դարի դասական շրջանին:

<sup>3</sup> **Բ. Սարգիսյան**, *Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վրայ*, Վենետիկ, 1898, էջ 1:

որոնք անխոնջ աշխատութեամբ և անյագ տենչմամբ կուսումնասիրեն և կը հրատարակեն զանոնք»<sup>4</sup>, - շարունակում է հեղինակը:

Հայկական անկանոն գրքերի ուսումնասիրության գործում հատկապես մեծ է Ն. Էմինի ավանդը. նա առաջին հայագետներից էր, ով պատշաճ ուշադրություն է հատկացրել հայկական պարականոններին և իր ընտիր թարգմանությունների միջոցով օտարերկրյա ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրել այս բնագավառի վրա:

Ըստ անվանի հայագետի՝ հայկական պարականոն գրականության ուսումնասիրությունը կարևոր է պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք թարգմանվել են հունական ու ասորական այնպիսի բնագրերից, որոնք ընդմիջտ կորսված են: Հայկական պարականոններն արժեքավոր են նաև այն պատճառով, որ դրանք ներկայացնում են նաև հունարեն, ասորերեն, լատիներեն ու եթովպերեն<sup>5</sup> լեզուներով պահպանված գրվածքների հարուստ տարատեսակներ<sup>6</sup>: «Միևնույն ժամանակ կեղծ գրվածքների շնորհիվ է, որ վաղ շրջանի երկերի բացակայության պարագայում մեզ են հասել պատմության խորքերում կորած ավանդությունները, քանզի հաճախ այդ կեղծիքներից շատերը կառուցված են վավերական հողի վրա և պատմական հենք ունեն»<sup>7</sup>:

Ն. Էմինի հիշատակին է նվիրված մխիթարյանների «Թանգարան հայոց հին ու նոր դպրութեանց» երեք հատորների հրատարակումը, որոնք լույս են տեսել 1896, 1898 և 1904 թթ. Վենետիկում<sup>8</sup>: Այս հրատարակությունները, որոնց մեջ ամփոփվել է Վենետիկյան ձեռագրերի մեզ հասած պարականոն հարուստ ժառանգությունը, սկիզբ դրեցին ոչ կանոնական գրվածքների գիտական ուսումնասիրությանը: Հետազոտությունների կարոտ է նաև Էջմիածնի, Երևանի Մատենադարանի, Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի, Երուսաղեմի, ու նաև անհատական ձեռագրացուցակներում պահպանված պարականոն մեծածավալ գրականությունը:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>5</sup> **Б. А. Тураев**, “Евангелие детства Христова в эфиопской письменности” (публикация **С. Б. Черенцова**). - Христианский Восток, т. 1, с. 434: Եթովպական եկեղեցին գրեթե տարբերություն չի դնում Ս. Գրքի կանոնական ու պարականոն գրվածքների միջև, ինչի շնորհիվ էլ բազմաթիվ անկանոն գրվածքներ հասել են մինչև մեր օրերն ամբողջական ու անխաթար տեսքով:

<sup>6</sup> Տե՛ս **Н. Эмин**, “К вопросу о собрании армянских апокрифов”, *Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе*, Москва, 1897, сс. 336-338:

<sup>7</sup> **Մ. Է. Շիրինյան**, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղադատությամբ), Եր., 2005, էջ 288:

<sup>8</sup> Թանգարան հին ու նոր նախնեաց, Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Ս. Հովսեփյան, Վեներտիկ, 1896, Բ. Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Ե. Տայեցի, Վեներտիկ, 1898, Գ. Անկանոն գիրք Առաքելականք, Ք. Զրաքյան, Վեներտիկ, 1904:

Թեև այս ասպարեզում որոշ աշխատանքներ կատարվել են, հայկական պարականոն գրականությունը մինչ այժմ քիչ ուսումնասիրված բնագավառն էրից մեկն է<sup>9</sup>: Ինչպես նշել է Հ. Տաշյանը, մեր եկեղեցական-պատմական գրականության մեծագույն մասը տակավին մթությամբ և շատ անգամ գրուցախառն քողով է ծածկված<sup>10</sup>:

Այն հանգամանքը, որ հայկական պարականոնների ուսումնասիրությանը շատ քիչ ուշադրություն է հատկացվել, Մ. Ավդալբեկյանը բացատրում է հետևյալ կերպ. «Հայ կյանքն արտացոլող հարուստ պատմագրության և ճոխ տաղերգության առկայությունն ուսումնասիրողների աչքից ետ է մղել այնպիսի մի բնագավառ, որտեղ դժվար է անմիջապես կապ տեսնել իրական կյանքի հետ: Սեփական ազգային պատմության փաստեր որոնողներին շատ քիչ նյութ կարող էին տալ Աստվածաշնչի կամ Ավետարանների վրա հյուսված գեղարվեստական գրույցները»<sup>11</sup>: Անտեսվել է միջնադարյան մշակույթի մի ամբողջ բնագավառ, որ ճանաչված չի եղել եկեղեցու կողմից: Այնինչ հատուկ քննության առարկա պիտի դառնան հենց այդ ստեղծագործությունները՝ և՛ իբրև գեղարվեստական շափազանց հետաքրքրական ստեղծագործություններ, և՛ իբրև ժամանակի ընդունելի հայացքներից տարբերվող պատմագրական հուշարձաններ:

Հայ իրականության մեջ պարականոնները մեծամասամբ օտար ծագում ունեն, սակայն դրանցից շատերը թարգմանվել, ավելի ճիշտ կլինի ասել՝ վերապատմվել են հայերեն այնքան հարազատ, հայեցի, որ իրենց ոճի ու խոսակցա-

<sup>9</sup> Այս առումով քերևս անհնար է շնչել հայկական պարականոնների արդի ուսումնասիրության ասպարեզում իրենց բեղուն գործունեությամբ հայտնի անվանի հայագետներ Վ. Կալզոլարիին (V. Calzolari, J. D. Kaestli, B. Outtier (eds), *Apocryphes arméniens. Traduction, création, transmission, iconographie (Actes du colloque international sur la littérature apocryphe en langue arménienne. Université de Genève, 18-20 septembre 1997 (Publications de l'Institut Romand des Sciences Bibliques 1), Lausanne, 1999, 190 p.*; V. Calzolari, *Les apôtres Thaddée et Barthélemy. Aux origines du christianisme arménien (Apocryphes 13)*, Turnhout: Brepols 2011, 258 p); Բ. Ուտիերին (B. Outtier, “Paralytique et ressuscité (CANT 85 et 62). Vie des apocryphes en arménien,” *Apocrypha VIII*, 1997, pp. 111-119; “The Armenian and Georgian versions of the Evangelium Nicodemi,” *Apocrypha* 21, 2010, pp. 49-55, Ի. Դորֆմանին (Dorfmann-Lazarev I., “The Cave of the Nativity Revisited: Memory of the Primæval Beings in the Armenian Lord’s Infancy and Cognate Sources”, in: *Mélanges Jean-Pierre Mahé (Travaux et Mémoires; 18)*, eds A. Mardirossian, A. Ouzounian, C. Zuckerman, Paris, 2014, pp. 285-334; “La transmission de l’apocryphe de l’Enfance de Jésus en Arménie”, in: *Jesus in apokryphen Evangelienüberlieferungen. Beiträge zu außerkanonischen Jesusüberlieferungen aus verschiedenen Sprach- und Kulturtraditionen (WUNT; 254)*, eds. J. Frey, J. Schröter. Tübingen: Mohr Siebeck 2010, pp. 557-582), ևն:

<sup>10</sup> Տե՛ս Հ. Տաշյան, Վարդապետություն առաքելոց, Անվաւերական կանոնաց մատեանը, Թուրք Յակոբայ առ Կորդատոս եւ Կանոնք Թադէի, Բնութիւն և բնագիրք, Վիեննա, 1896, էջ 1:

<sup>11</sup> Մ. Ավդալբեկյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, (Տ-րդ դար), Եր., 1971 թ., էջ 159:

կան լեզվի կենդանությունը կարող են մրցել հայ ինքնուրույն գրական բնագրերի հետ<sup>12</sup>: Հայկական մատենագրությունը մեզ ավանդել է նաև մեծ թվով անվավերներ, որոնք բացի թարգմանություններ լինելուց, գրվել են հայկական հողի վրա: Հայերը, ինչպես և այլ ազգերը, իրենք են ստեղծել սեփական պարականոններ՝ կապված ազգային զանազան սրբերի վարքերի ու վկայաբանությունների հետ<sup>13</sup>: Այս գրվածքները Աստվածաշնչի մաս չկազմելու պատճառով նույնպես ընդգրկվել են պարականոնների շարքում<sup>14</sup>:

Պարականոն վերոնշյալ գրքերը միջնադարյան գաղափարախոսությունների բացահայտման առումով կարևոր ու հետաքրքրաշարժ երևույթներ են, որտեղ արտացոլում է գտել միջնադարյան մարդու աշխարհընկալումը: Ինչպես գրում է Մ. Աբեղյանը, աստվածաշնչյան պարականոն զրույցներն ու պատմվածքները ոչ միայն հասկանալի, այլև շատ հաճելի պիտի լինեին դեռ մանկական հայ մտքին<sup>15</sup>: Այս հիմքի վրա կանոնական Հին և Նոր կտակարանների կողքին ստեղծվել է, եթե կարելի է ասել՝ «ժողովրդական» սուրբ գիրքը<sup>16</sup>:

Պարականոն ավետարանների մի ամբողջ շարք է հյուսված նորկտակարանյան թեմաների ու կերպարների շուրջ: Մեր ուսումնասիրության առարկան առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող Գիր Տղայութեան Քրիստոսի<sup>17</sup>

<sup>12</sup> Տե՛ս էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, խմբագրությամբ և առաջաբանով Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1957, էջ XXIII:

<sup>13</sup> Ներկայումս դժվար է հստակ գատնողել վարժաբանական ու պարականոն գրականությունը, քանի որ հայկական ձեռագրերի տարբեր ժողովածուներում այս երկուսի համադրումը հազվադեպ երևույթ չէ, տե՛ս V. Calzolari, “Christian Apocryphal literature: Between Traditional Interpretations and New Directions of Research”, *Armenian Philology in the Modern Era, from manuscripts to digital text*, 2014, pp. 264-266:

<sup>14</sup> Տե՛ս A. Веселовский, “Собрание сочинений”, т. III, *Литературное значение средневековых ересей*, М. 1921, с. 162:

<sup>15</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, գիրք առաջին, Ե, 1944, էջ 90:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 165: Նման «ժողովրդական» պարականոն գրվածքներից է հատկապես միջնադարում լայն ժողովրդականություն վայելող *Արարածոց* գրքի պարականոն ավանդությունը՝ *Ադամգիրքը (շչիոթեկ Առաքել Այրուհեցու նույնանուն շափածո ստեղծագործության հետ, որը, սակայն, նույնպես գրվել է պարականոնների հիման վրա)*: Այս մասին մանրամասն տե՛ս S. Դանիել Վրդ. Թումանյան, «Ծննդ. Գ. 1-7-ի աստվածաբանական մոտիվները հայ պարականոն գրականության մեջ», *էջմիածին*, 2013, Ժ, էջ 23-38: *Ադամգրքի* ուսումնասիրության ասպարեզում վիթխարի ավանդ ունի ամվանի հայագետ M. Stone, “The History of the Forefathers, Adam and His Sons and Grandsons,” *JSAS* 1, 1984, pp. 79-91; *Armenian Apocrypha Relating to Adam and Eve*, Leiden: Brill, 1996, pp. 180-200; “The Death of Adam - An Armenian Adam Book,” *Harvard Theological Review*, 59, 1966, p. 288; *Adamgirk, The Adam Book of Arak ‘el Siwnec ‘i*, translated by M. E Stone, Oxford, 2007: Տե՛ս նաև Մ. Է. Սթոուն, *Պարականոն բնագրեր և ավանդություններ*, Եր., 2014, etc.:

<sup>17</sup> Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրաց մատենադարանի թիվ 1432, 3062, 3164 և 3364 ձեռագրերում պահպանված «Մանկութեան ավետարանները» հրատարակել է Միփան վրդ. Մխեանը, *Սրոն*, 1972, № 46, 122-131, 235-239: Այս շուրջ ավետարաններից հայտնի է միայն թիվ 3062-ի գրության ժամանակն ու վայրը, որի մասին տեղեկանում ենք հիշատա-

անվանումով հայտնի պարականոն ավետարանն է, որ հայկական թարգմանական գրականության գոհարներից մեկը կարելի է համարել: Կրելով Հակոբոսի նախավետարանի (*Protevangelium Iacobi*), և Պատմութիւն թովմայի (*Narratio Thomae*) պարականոն ավետարանների, ինչպես նաև ասորական, պարսկական ու արաբական<sup>18</sup> ավանդությունների կնիքը, հայկական Մանկության ավետարան-ը ավելի քան հինգ անգամ ծավալով գերազանցում է դրանց՝ շնորհիվ հարուստ բովանդակության և ճոխության:

Բացի բովանդակային հարուստ նյութից, Գիր տղայութեան ավետարան-ն ուշադրության է արժանի նաև այն պատճառով, որ հիշատակվել է միջնադարյան արգելված գրքերի մեջ հայտնի բոլոր ցանկերում: Սակայն այդ հանգամանքը դուրս-ինչ չի խոչնդոտել, որ պարականոն հայերի համար դառնար վերոնշյալ «ժողովրդական» սուրբ գրքերից մեկը: Գիր Տղայութեան ավետարանը ներթափանցել է հայկական միջավայր, ձեռք բերել հայկական ուրույն գծեր և ընդհուպ մինչև XIX դարի վերջերը շարունակվել ընդօրինակվել<sup>19</sup>: Մատենագրական աշխարհում հայտնի են հունարենով, լատիներենով, ասորերենով, հին ռուսերենով, ինչպես նաև հայերենով պահպանված անվավերների մի շարք ցուցակներ<sup>20</sup>:

Հ. Տաշյանը «Ս. Գրոց կանոնական եւ անվաւեր գրքերուն քանի մը հայերէն ցուցակներուն մասին»<sup>21</sup> գրախոսականում ներկայացում է Թ. Յանի՝ «Քննութիւնք պատմութեան կանոնի Նոր Կտակարանի» աշխատության 5-րդ հատորի մեջ հեղինակի առաջ քաշած վարկածները Սամուել Անեցու (մոտ 1100/05–1185/90) և Մխիթար Այրիվանեցու (1222-1307) ժամանակագրական երկու հայտնի ցանկերի մասին:

Սամուել Անեցին եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությանը կցելով իրենը՝ այն հասցրել է մինչև 1180 թվականը: Խոսելով 591 թվականին կատարված իրադարձությունների մասին՝ հեղինակը գրում է. «Ի Լէ. թուականիս եկին

---

կարանից. «Գրվեցաւ գիրքս ձեռամբ սուտանուն Միրաբ դպրիս, որ է յերկրէն Ակնա ի գիւղէն Կամրկապցի. եւ որ հանդիպիք սմա կարդարով կամ արիմակելով, միով հայր մեղայիս յիշեցիք. եւ դոմ ես յիշեալ լիցիք ի Քրիստոսէ, ամէն,

«Թուին ՌՃԾԲ (1703) գրվեցաւ ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս»:

<sup>18</sup> **Գարեգին Եպս.**, «Յովասափ Սեբաստացի», *Արարատ*, ապրիլ-դեկտեմբեր, 1918, Գ-ԺԲ, էջմիածին, էջ 255: Հայերեն *Մանկութեան ավետարան-ը* բովանդակությամբ ավելի մոտ է *Evangelium Infantine arabicum*-ին, որի ազդեցությունը նկատվում է նաև Դուրանում:

<sup>19</sup> Տե՛ս օրինակ՝ **Ն. Պողոսեան**, *Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, Կ. ԺԱ, Երուսաղեմ, 1991, թիվ 3860, *Աւետարան մանկութեան*, 1897, Նիւեօրֆ, ստացող՝ Ագապի Տաշեան:

<sup>20</sup> **Հ. Անասյան**, *Հայկական Մատենագիտություն*, Կ. Ա. Եր., 1959, էջ 906. «Անկանոն Գրեւ, Ե-ԺԸ դդ»:

<sup>21</sup> **Հ. Տաշեան**, «Սուրբ Գրոց կանոնական եւ անվաւեր գրքերուն քանի մը հայերէն ցուցակներուն մասին, գրախօսութիւն», *Հանդէս Ամսօրեայ*, 1895, էջ 1:

ի Հայս Ասորիք՝ արք քաջաբանք՝ եւ կամէին սերմանել զաղանդն նեստորի՝ եւ նզովեալք հալածեցան: Բայց ոմանք ընկալան՝ նոքա թարգմանեցին նոցին գիրս սուտս. զգօրտոսակ, կիրակոսակ, զՊօղոսի տեսին. զԱդամայ ապաշխարութիւն եւ զգիաթէկն. Զմանկութիւն Տեառն, եւ զՍեբիոս. եւ զՃիռն օրհնութեան. եւ զանթագչելի մատեանսն. եւ աւետարանի մեկնութիւն զՄանեայ եւ որ հաւատայ նոցա՝ նզովի՝<sup>22</sup>»:

Նշված ցանկից հետևում է, որ այս գրվածքները VI դարի վերջին նեստորականների<sup>23</sup> մոտ արդեն իսկ տարածված են եղել և բերվելով Հայաստան՝ թարգմանվել են հայերեն: Յանկում հիշատակվող մեր հետաքրքրության առարկա Մանկութիւն Տեառն գրվածքն ըստ Յանի, նույն Թովմայաաւետարանն է<sup>24</sup>, որ ասորի թարգմանութեան մեջ կոչվում է «Մանկութիւն Տեառն մերոյ Յիսուսի»։ սա այն Տղայաւետարանն է, որ հաճախ ենք գտնում ձեռագրերում՝ «Յակոբայ եղբօր Տեառն անուամբ»:

Հայաստանում նեստորական ասորիների ծավալած ամենաեռանդուն գործունեության ժամանակից (VI դ.) շուրջ վեց հարյուրամյակ հետո ապրած հեղինակը նեստորական գրքերի ցուցակը պետք է վերցրած լիներ ինչ-որ հին, անհետացած աղբյուրից:

Այս նույն մատենագրական ցուցակը գրեթե բառացի գտնում ենք նաև XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու (1201-1272) Պատմութեան մեջ<sup>25</sup>:

<sup>22</sup> **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, աշխ. Կ. Մաթևոսյանի, Ա. Հայրապետյանի, Գ. Տեր-Վարդանյանի: Եր., 2011, էջ 95:

<sup>23</sup> Նեստորականության դեմ պայքարը Հայաստանում ավարտվել է հաղթանակով արդեն 7-րդ դարի վերջերին: Ոչնչացվել է նաև նեստորականության և աղանդավորության կնիքը կրող գրականությունը, չհաշված առանձին հատակոտորների, որոնք փրկվել են ու լայն տարածում գտել, տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Եր., 1968, էջ 146: Իսկ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը մատնանշում է, որ Սամվել Անեցու և Մխիթար Այրվանեցու ցուցակներում հիշատակված տասն անկանոն գրքերից հայ մատենագրության մեջ պահպանվել են միայն երկուսը՝ «Ադամի ապաշխարութիւնն» ու «Մանկութիւն Տեառն», իսկ մնացյալները ոչ միայն հայ մատենագրության մեջ, այլ ընդհանրապես հայտնի չեն», տե՛ս Месроп Тер-Мовсисян, История перевода Библии на армянский язык, СПб, 1902, с. 251:

<sup>24</sup> Հայկական ձեռագրերում չի պահպանվել կամ մինչ այժմ չի հայտնաբերվել Թովմայի ավետարանը, որի լրիվ անվանումն է «Փարայելացի փիլիսոփա Թովմայի պատմութիւնը Քրիստոսի մանկութեան մասին», տե՛ս Ք. Տեր-Գալթյան, «Թովմայի ավետարանի հետևերը հայ միջնադարյան գրույցներում», էջմիածին, 1998, Գ, էջ 111: Տե՛ս նաև՝ Ք. Տեր-Գալթյան, Հայկական սրբախոսություն, Վարքեր և վկայաբանություններ (V-XVIII), 2011, Եր., էջ 193-194:

<sup>25</sup> **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961 թ. էջ 51: Տե՛ս նաև՝ Կիրակոսի Վարդապետի Գանձակեցիոյ, Համառոտ Պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ յաւորս իւր լուսաբանեալ, Վենետիկ, 1865, էջ 29: Հմմ. ՄՄ 462, ք. 219բ:

VI-VII դարերում այսպիսի ցանկեր ըստ երևույթին շատ են ընդօրինակվել, ու նրանցից մի քանիսը պիտի որ պահպանվեին մինչև XII-XIII դարերը<sup>26</sup> :

Գ. Զարբհանայանն իր «Մատենադարան հայկական թարգմանութեանց» գրքում բերում է նեստորական գրականության մի ուրիշ ցանկ, որ նա վերցրել է, իր խոսքով, մի նոր գրչագրից. «Այս են անուանք ութևատան սուտ գրոց որ եկեալ ի հերձուածող Ասորւոց և ոչ յուղղափառաց Ասորւոց», այն պարունակում է՝ «Ադամայ կտակն, Ճիռն օրհնութեան, Փիփիանն, Գորտոսակն, Կիրակոսակն, Դոսիմովն, Պետրոսի տեսիլն, Դիաթիկն, Աստուածածնի պատմութիւնն, Սեբիոսն, Փիտհոնացիքն, Մանկութեան ատարանն, Մանեայ մեկնութիւն ատարանի»<sup>27</sup> :

Հնից եկող մատենագիտական շատ հետաքրքրական ցանկեր են պահպանվել XIII դարի հեղինակ Մխիթար Այրիվանեցու կազմած և ընդօրինակած մի ժողովածուի մեջ: Այդ ժողովածուն, որ այժմ հաղթնտիր<sup>28</sup> է կոչվում, ընդգրկում է տարբեր բնագրեր, այդ թվում և Աստուածաշունչ: Այնտեղ, ուր վերջանում է Հին Կտակարանը (Նոր Կտակարանն այստեղ նախորդում է Հին), մի էջի վրա իրար տակ ընդօրինակված են գրքերի շորս ցուցակներ, որոնք դեռ XX դարի սկզբից բանասերների ուշադրության կենտրոնում են եղել:

Այս ցուցակների առաջին երկուսը Մխիթար Այրիվանեցին զետեղել է նաև իր մյուս աշխատության՝ «Պատմություն ժամանակագրական»-ի<sup>29</sup> մեջ, որը 1867 թ. հրատարակել է Ք. Պատկանյանը:

Հիշյալ շորս ցուցակներից առաջինը հայերեն թարգմանված պարականոն գրքերի, այսինքն հայերեն գրքերի ցուցակ է՝ «Գիրք զոր ունին հրեայքն ի ծածուկ այսոքիկ են. «Ադամայ, Էնովֆայ, Սիբելայ, ԲԺ. նահապետացն, Ադապֆն Յովսեփու, Վերացումն Մուսիսի, Եղադ եւ Մովղադն, Սաղոմոնի սաղմոսն, Եղիաի ծածուկֆն, Դանիելի է. երոդ տեսիլն: Իսկ ըստ նորոյս. «Գիրք մանկութեան Տեառն, Թումայի ատարանն, Յայտնութիւնն Պետրոսի, Շրչազոյ Պաղոսի, Կաթողիկէ թուղթն Բառնարայ և Յովղաի և Թումայի»»: Սրբոյն

<sup>26</sup> Ն. Ակիմյան, Կիրիոն կաթողիկոս վրաց, պատմութիւն հայ-վրացական չարաբերութեանց յօթերորդ դարու մեջ, Վիեննա, 1910, էջ 180: Ինչպես գրում է Ն. Ակիմյանը, ասորիները մեծապես նպաստել են վրաց կրոնավորական կյանքի վերածնությանը, սակայն Ասորիքից այնտեղ մուտք են գործել նաև մանիքեական ֆարոգիչները, որոնք իրենց աղանդը ֆարոգելու համար այնտեղ ժողովարան են սարքել: Վերջիններս սակայն չարաշար հալածվել են, թեև իրենց գնոսափկյան գրությունները թողել են այնտեղ և ոչ պակաս վնաս հասցրել ուղղադավանությանը:

<sup>27</sup> Գ. Զարբհանայան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 20:

<sup>28</sup> Մխիթար Այրիվանեցու հայտնի հաղթնտիրն է ՄՄ 1500 (1272-1287 թթ.), թ. 369բ:

<sup>29</sup> ՄՄ 582, թթ. 39ա-40ա. «Կարգադրութիւն Գրոց սրբոց, որք ստուգաբանեցան ի Սարկաւազ վարդապետէն և գրեցան յինէն՝ ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի մի տուփ յաւուրս ճՀ»:

Կղեմա, եթէ որ գիրք ընդունելի է. «Գործն և Կանոնն առաքելոցն, Յայանութիւն Յոհաննու, որ կոչի պիլալիմսիս, Խրատ Աստուածածնին՝ առաքելոցն, Գիրքն Դիոնեսէա Աթենացոյ, Տիմոթէա թուղթն, Գիրք Կրիսպոսի, Բաննն Յուստոսի, Թուղթն Բառնաբայ»<sup>30</sup>:

Մի դեպքում «գիրք, զոր ունին հրեայքն ի ծածուկ» ասելով հեղինակը կարող էր նկատի ունենալ Աստվածաշնչի հրեական մասի, այսինքն՝ Հին Կտակարանի պարականոն գրքերը: Այս դեպքում վերնագիրը վերաբերում է ցուցակի միայն առաջին մասին: Սակայն «զոր ունին հրեայքն» արտահայտությունը կարող է նշանակել և այն, որ ցուցակում բերված բոլոր գրքերը տարածել են հրեա (կամ հրեական թեքում ունեցող) աղանդները: Այս դեպքում վերնագիրն ընդհանուր է ցուցակի առաջին ու երկրորդ հատվածների համար<sup>31</sup>:

Թե ով է ծածուկ գրքերի ցուցակի հեղինակը, անհայտ է, բայց այս աղբյուրը (կամ աղբյուրները) ևս բավական հին է, որից և օգտվել է Մխիթար Այրիվանեցիի XIII դարում<sup>32</sup>: Իսկ ըստ Թ. Յանի՝ վերոնշյալ ցանկի ծագումը ոչ ասորական է, և ոչ էլ հայկական<sup>33</sup>: Այն գրի է առնվել Պաղեստինում և հայ ուխտավորի կողմից բերվել է Հայաստան, որտեղ և հետագայում թարգմանվել է 550-600 թթ.:

Անհնարին կլինեք ոչնչացնել նեստորական բոլոր գրքերը, սակայն պատահական չէ, որ մատենագիտական այս ցանկերում նշված գրքերից մինչև օրս պահպանվել ու շարունակաբար ընդօրինակվել են միայն Աղամգիրքը<sup>34</sup> և Քրիստոսի աղայութեան աւետարանը: Մտածելու տեղիք է տալիս այն հարցը, թե ինչպես կարող էին հայկական վանքերում դարեր շարունակ ընդօրինակվել հայ եկեղեցու կողմից մերժվող, աղանդավորական համարվող գրքերը:

Տարբեր ժամանակներում կազմված Աստվածաշնչի հայկական կանոնական ցանկերի, ինչպես նաև տարբեր դարերում գրված Ս. Գրքի բովանդակային համեմատությունը ցույց է տալիս, որ կանոնական և ծածուկ կամ պարականոն գրքերի ըմբռնումը հայոց մեջ միշտ միևնույնը չի եղել. որոշ գրքեր, որ մի ժամանակ անընդունելի են համարվել, հետագայում մտել են կանոնական

<sup>30</sup> Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, ՍՊԲ, 1867, էջ 33:

<sup>31</sup> Տե՛ս Ռ. Իշխանյան, Հայ մատենագրության պատմություն, V-XVIII դարեր, Եր., 1964 թ. էջ 28:

<sup>32</sup> Այդ մասին տե՛ս Մ. Тер-Мовсисян, укр. соч., сс. 243-251, նաև՝ Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 5:

<sup>33</sup> Այս մասին մանրամասն տե՛ս նաև՝ Գ. Գալեմբարեան, «Մխիթար Այրիվանեցի եւ իւր նորագիտ գրութիւնը», Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 161-167:

<sup>34</sup> E. Preuschen, *Die apokryphen gnostischen Adamschriften aus dem Armenischen übersetzt und untersucht*, Giessen, 1900, ամփոփումն ըստ Հ. Բ. Պ.-ի, Հանդէս Ամսօրեայ, 1902, էջ 8-9: Հեղինակի կարծիքով հայերեն Աղամգիրքը հունական բնագրից է թարգմանվել և աղերսներ ունի «աթթյան» կոչված գնոստիկյան աղանդավորների Հայաստան թափանցելու մասին Եպիփան Կիպրացու հաղորդած տեղեկությունների հետ (Heresis 40): Շուրջ 360 թ. եվտակոսոս անունով մի հայի կողմից այս գրքերը բերվել են Հայաստան:



գրքերի շարքը և ընդհակառակը<sup>35</sup>: Այս հանգամանքը կարող էր պատճառ դառնալ, որ ընդօրինակող գրիչը շիմանար իր օրոք եղած կանոնը և ընդօրինակեր եկեղեցուց մերժված գրքեր: Կազմվել են հրահանգներ այն մասին, որ եկեղեցական գրքերը պետք է ընդօրինակեն նրանց կանոնի վերաբերյալ մատենագիտական ստույգ գիտելիքներ ունեցող և դավանանքով լիովին հայ եկեղեցուն նվիրված անձինք: Սակայն այսպիսի գրիչներն այնքան էլ շատ չեն եղել միջնադարյան հայկական վանքերում: Շատ դեպքերում հայ գրիչները եկեղեցական գրքեր ընդօրինակելիս արտագրում էին առանց խտրության՝ շտաբերելով ընդունվածը մերժվածից<sup>36</sup>:

Այնուամենայնիվ, անգիտությունը շատ չնչին դեր կարող էր ունենալ հայոց մեջ ծածուկ ու սուտ կոչված գրքերի ընդօրինակման գործում: Ուշադրություն են գրավում Սսի 1243 թ. ժողովում ընդունված այն կանոնները, ըստ որոնց եկեղեցական գրքերի ընդօրինակողից պահանջվում են ոչ միայն գիտելիքներ, երկարամյա փորձ. «Ժ. Գրոց դասասացք բազմաց վկայութեամբ լիցին որ գիտունք եւ ամենայն գրոց վարժք եւ տեղեակք եւ փորձ ամենայնի: Նոյնպէս եւ գրոց աշակերտքն ընտրութեամբ նորին եւ առաւել փորձիւ եւ վկայութեամբ կատարելոց»<sup>37</sup> և «ԺԱ. եւ հրամայեսցէ եպիսկոպոսն զսուրբ գիրս եկեղեցւոյ գրել արուեստաւորաց, գիտնոց», այլ նաև դավանանքի անխափանություն՝ «եւ ուղղափառաց»<sup>38</sup>: Սա նշանակում է, որ Հայաստանում պարականոն գրքերի ընդօրինակման ազդակ են եղել նաև ընդօրինակողների դավանական, գաղափարական հակումները, այսինքն՝ որոշ ծածուկ ու սուտ համարվող գրքեր կարող են բազմացված լինել դիտավորութեամբ: Ուրեմն՝ գրիչները կարող էին նաև իմանալ, որ գիրքը պաշտոնական եկեղեցու կողմից մերժված է: Գիր Տղայուբեան պարականոնի 1239 թ. ընդօրինակված ձեռագրի հետագայի (XV դ.) հիշատակարանում գրիչը հավելում է. «Եթէ ոք ուզէ կարդալու կամ օրինակելու չի խնայէ՛ տագ գրաւ կնով գէրայ այս գիրկս ա տարի մի կորաւ ձեռքը ձեռք տալով ով աստուծոյ աւրհնութիւն ուզէ տեղը հասուցանէ ով պահէ նզովեալ եղիցի»<sup>39</sup>: Այս խոսքերը հստակ վկայում են այն մասին, որ հեղինակը ոչ միայն տեղյակ էր, թե ինքն ինչ է ընդօրինակում, այլ նաև զգուշացնում է, որ ով այն թաքցնի՝ կնզովվի:

<sup>35</sup> Տե՛ս օրինակ, Մ. Тер-Мовсисян, *Ук. соч.*, сс. 213-223, 224-266:

<sup>36</sup> Ռ. Իշխանյան, *նշվ. աշխ.*, էջ 29:

<sup>37</sup> Ալ. Պալևեան, *Պատմութիւն Կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութիւն նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ ի Փորենտեան Սինհոդոսի, Վիեննա, 1878*, էջ 269:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 269:

<sup>39</sup> Տե՛ս Եր. Շահազիզ, «Նոր Նախիջևանի ձեռագրերը», *Լուսայ, Թիֆլիս*, 1902 թ., № 3, մայիս-հունիս, էջ 241:

Տղայաւետարան, Մանկութեան աւետարան կամ Յիսուսի տղայութեան գիրքը հնագույն ընդօրինակութեամբ մեզ է հասել 1239 թվականից<sup>40</sup> «յեպեսկոպոսութեան մեծ հոյակապ քաղաքիս Սեբաստիոյ տէր Գրիգորի Աստուածատուր» գրչի կողմից<sup>41</sup> :

Ջարբհանայանը նշում է Քրիստոսի Մանկութեան աւետարան-ի երեք ձեռագիր, որոնցից մեկը պահվել է Կտուց կղզում (Մեծ եղեռնի ժամանակ բերվել է Հայաստան և այժմ պահվում է Մատենադարանում 5599 թվահամարի տակ): «Մեր յիշատակարանը բաւականին զանազանում է նույնատեսակ եւրոպական լեզուներով եղած յայտնի յիշատակարաններից», - նկատել է Ջարբհանայանը՝ խոսելով Կտուց անապատի ձեռագրի մասին: Ըստ նրա՝ Հիսուսի մանկության հայկական վերոնշյալ ավետարանը կրում է արևելյան աղբյուրների ազդեցութիւնը<sup>42</sup> : Միայն արևելյան աղբյուրների մեջ է պատմվում, օրինակ ներկարարի մոտ Հիսուսի արկածի մասին:

Ն. Մառը համարել է, որ Գիր Տղայութեան մեզ հասած ամենավաղ ընդօրինակումն ունեցող ձեռագիրը հենց Ջարբհանայանի հիշատակած տարբերակն է, որ թվագրվում է 1347 թվականով: Ըստ հեղինակի՝ այս պարականոն ավետարանը պարսկական ծագում ունի, ինչը գլխավորապես երևում է այն առաջնակարգ դերից, որ պատկանում է պարսից մոգ-թագավորին և առհասարակ պարսիկ ժողովրդին<sup>43</sup> : Այդ անվավերականի պարսկական ծագման օգտին են խոսում փոխառված բառերը, ինչպես օրինակ՝ դուֆան, շոգան: Առհասարակ այս հիշատակարանը գրված է հետագա դարերի այն գրականական լեզվով, որը հատուկ է պարսկական և արաբական նման ժանրի գրականութեան հետ սերտ առնչութիւն ունեցող հայկական գրավոր հեքիաթներին և առականերին:

Թիվ 5599 ձեռագրում Տղայութեան աւետարանը վերնագրված է. «երանելոյն Յակոբայ եղբոր տեառն ասացեալ ի Յովակիմ և Աննայ»: Սա Տղայութեան աւետարան-ի ամենաընդարձակ տարբերակներից մեկն է: Բացի ամենամեծածավալը լինելուց, այն նաև աչքի է ընկնում ենթավերնագրերի տարբեր լինելով ու դրանց դասավորվածութեամբ:

Տղայութեան աւետարան-ի մասին վկայութիւն ունի դեռևս չորրորդ դարի (306-379 թթ.) քրիստոնյա հեղինակ ասորի և ընդհանրական եկեղեցու

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 239: Այս ձեռագիրը նախապես եղել է Նոր Նախիջանի ձեռագրերի շարքում, Այժմ պահվում է Երևանի Մաշտոցի Մատենադարանում (այնուհետև՝ ՄՄ) 7574-ի, թվահամարի տակ: Բնագիրը անգլերեն է թարգմանել ու հրատարակել Ա. Տերյանը, տե՛ս A. Terian, *The Armenian Gospel of the Infancy*, Oxford, New York, 2008:

<sup>41</sup> Գարեգին Ա. Կաթողիկոս, *Յիշատակարանք ձեռագրաց*, Հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 939-940:

<sup>42</sup> *Apocryphal New Testament*, published by Cebbie & Co, Philadelphia, 1889, p. 40.

<sup>43</sup> Ն. Մառ, *Ամառային ուղևորութիւնից դէպի ի Հայս, նկատողութիւններ եւ քաղուածներ հայկական ձեռագրերից*, թարգմ.՝ Ո. Անտիեան, Վիեննա, 1892, էջ 42-43:

սուրբ Եփրեմ Ասորին: Իր ճառերից մեկում նա գրում է. «Արդ սա յետ աւետարանին իւրոյ զոր գրեաց, քանզի ետես զի խարզախողք ոմանք գրեցին ի մտաց իւրեանց աւետարան յանուն տղայութեան Քրիստոսի տեառն մերոյ, և այլք գիրս հարցուածոց յանուն Մարիամու և աշակերտացն Քրիստոսի»<sup>44</sup>, յորում ասեն թէ զկնի յարուժեանն յետ ութուտասն ամսոյ վերացաւ անդրանիկն այն, զորմէ առաքեալքն իւր գրեն՝ թե յետ քառասուն աւուր իսկ և իսկ վերացաւ նա յերկինս, արդ զի խափանեսցէ Ղուկաս զսուտ գիրս այլափառացն յաւետարանէն Քրիստոսի տեառն մերոյ, որք երիցութիւն և կրտսերութիւն գործոց ստեղծաբանեն զտեառնէ Յիսուսէ, ինչ-ինչ նախ քան զմկրտիլն և ինչ-ինչ յետ քառասնօրեայ վերացման նորա, դնէ ի մատեանս գործոց առաքելոցն սկիզբն ի կատարումն գործոց տեառն մերոյ ըստ նմանութեան այլոց աւետարանչացն, սկսեալ ի մկրտութենէն տեառն ի Յովհաննէ մինչև ի քառասուն օր վերացման նորա. զի ցուցցե՛ թէ ամենայն գործ ուր և գտցի գրեալ յանուն տեառն Քրիստոսի, նախ քան զմկրտութիւն նորա և յետ քառասուն աւուր համբառնալոյ նորա, օտար է գործն այն ի Քրիստոսէ տեառնէ մերմէ»<sup>45</sup>:

Նույն ժամանակաշրջանի մեկ այլ ակնառու քրիստոնյա շատագոյլ Կյուրեղ Երուսաղեմացին (334-386 թթ.) իր «Կոչումն ընծայութեան» երկի «Վասն գրոց սրբոց», խորագրի տակ գրում է. «Իսկ ի նորոց Կտակարանաց շորս աւետարանք միայն. այլ այլքն սուտ անուանեալ գրեալ, և վնաս ընթերցեալ ընթեռնլեաց են: Այլ գրեցին և մանիքեցիքն Թովմայզլովի աւետարան, որում անուշահոտ աւետարանացն անուն եղեալ կարգան, ծեփեալ շաղախ առ ապականել զոգի միամտացն»<sup>46</sup>:

Որոշակի տվյալներ չունենք Գիր տղայութեան-ի թարգմանությունն ժամանակի վերաբերյալ: Սակայն 12-րդ դարում այն արդեն հայերեն լեզվով գոյություն ուներ, քանի որ այն հիշատակում է Սարգիս Շնորհալին իր Կաթողիկէ թղթերի մեկնության մեջ<sup>47</sup>. «Իսկ որ ամենևին խոտելիք են՝ քանզի ի հոգւոյն

<sup>44</sup> *Беседы с Учителем. Избранные письма Елены Ивановны Рерих*. Рига, 2001, с. 158. Գնոստիկյան գրականության մեջ հայտնի են «Մարիամ Մագդաղենացու մեծ ու փոքր հարցումները և Քրիստոսի պատասխանները» պարականոն գրվածքները: «Մեծ հարցումները» մեզ չեն հասել, որոշ հատվածներ պահպանվել են միայն «Փոքր հարցումից»: «Մարիամի հարցումների» մասին է հիշատակում նաև Եպիփան Կիպրացին, **Епифаний Кипрский, Панарион (Отрывки), О так называемых гностиках, шестой или двадцать шестой ереси**, <http://simvol-veri.ru/xp/epifaniie-kiprskie.-panarion.-chast-1.html>

<sup>45</sup> Մեկնությունն Գործոց Առաքելոց, խմբագիր արարեալ նախնեաց Յոսկեբերանէ եւ Յեփրեմէ, Վեներաբիլ, 1839, ճառ Ա, էջ 13:

<sup>46</sup> *Կոչումն ընծայութեան*, երանելոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի, Վիեննա, 1832, էջ 70-71:

<sup>47</sup> Ք. Չրաֆեան, “La forme la plus ancienne du Protévangile de Jacques”, *Բազմավեպ*, 1962, էջ 118-122, գրախոսություն:

մոլորուէ արտադրեցան, պրակասաւթայքն՝ զօր տօն Մարիամու անուանեն (և աւետարանն՝ զոր Թումային ասեն) և գիրք տղայութեան Քրիստոսի, և այլք սոյնպիսիք՝ որք ի կերպարանս ճշմարտութեանն կամեցան ի ներքս մտանել, զոր ոչ ընկալաւ եկեղեցի Աստուծոյ՝ զորոմն շարութեան և զգաղձն վնասակար»<sup>48</sup>:

Գիր Տղայութեան ավետարանի մասին վկայութիւններ պահպանվել են մեր պատմագիրներին երկերում. «Յայնժամ ապա այր մի յորդուցն Իսմայէլի, որում անուն էր Մահմատ թանգար, որ էր ծնեալ ի քաղաքին Մագիանայ մերձ ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ՝ յազգէն, որ կոչի Կորել՝ որդի Աբդըլայ, որ մեռաւ՝ որք թողեալ զնա, որ և յարեցաւ ի վաճառական մի և եղև ի տան նորա յառաջագէմ: Մեռաւ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ՝ առեալ զկին նորա: Եւ երթայր ուղտովք յեգիպտոս. և պատահեաց նմա միայնակեաց մի Սարգիս անուն, յաղանդոյն Արիոսի և Կերինտոսի, որ և ուսոյց նմա ի հին մատենիցն զԱստուած և զՏղայութեան գիրս Տեառն մերոյ: Եւ ի դառնալն ի տուն՝ քարոզեաց զոր լուան, և հալածեցին զնա ազգըն իւր, և եկն յանապատն Փառանու: Յորժամ եկին երկոտասան հազար Հրեայք և առեալ պատճառքս ի նոցանէ՝ քարոզեաց որդուցն Իսրայէլի զԱստուած Աբրահամու»<sup>49</sup>:

Մխիթար Անեցի (XIII դ.) պատմում է. «Եւ եղև ասէ, ի ժամանակին յայնմիկ այր մի անուն Մահմէտ, յազգէն որ կոչի Կուրէշ (Մուհամմէդ, որդի Աբդալլայի էր ի Կորայիշ, ցեղէն Տաճկաց), յորդոց Կեդարայ, յերկոտասան ցեղից Իսմայէլի: Որոյ եկեալ ի սուրբ լեռն Սինէական, աշակերտեցաւ միայնակեցի ումեմն, որ գիտէր լեզու իսմայէլացի և պարսիկ, անուն Բիսիրայ, որոյ առեալ զնա՝ կամելով ճշմարտութեամբ ամենայնի ի վերայ հասուցանել. սկիզբն արարեալ ի լինելութենէ արարածոց, ոճ եղեալ ընթեռնոյր նմա զգիրս ծննդոց և զայլն ամենայն կարգաւ, և զոր Կտակարանս և զգիրսն զոր Յիսուսի մանկութեանն կոչեն»<sup>50</sup>: Ինչպես Մառն է ենթադրում, Անեցի ծանոթ է եղել այս գրքի հայերեն տարբերակին:

Նույն ժամանակահատվածում ապրած ու ստեղծագործած XIII դարի մատենագիր Վարդանն օգտվել է Քրիստոսի մանկություն կոչված անվավերական գրվածքից: Նա թվարկում է պարականոնում բավականին կարևոր դերակատարութիւն ունեցող թագավոր-մոգերին, որոնց անունները նշված չեն նորկտակարանյան ավետարաններում. «Մոկաց գաւառն է իշխանանիստ, ուր կան բազում վանորայք: Նախ Ամենափրկիչն, ուր կայ գերեզման (Ձէ՛ԼԻԿ ԿՀՄՊՓՄն)

<sup>48</sup> **Սարգիս Շնորհալի**, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, տպեալ յամի 1828 ի Կ. Պոլիս, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1998, էջ 399:

<sup>49</sup> **Վարդան Բարձրբերդեցի**, Պատմութիւն տիեզերական, լոյս ընծայեց Մ. Էմինը, Մոսկվա, 1861, էջ 88: Հիշատակված Տղայութեան գիր -ը հավանաբար Մանկության ավետարանի արաբական տարբերակն է, որը բոլոր մանկության ավետարաններից ամենաընդարձակն է:

<sup>50</sup> Սկիզբն նորա գիւտ պատմութեան Մխիթարայ Անեցայ, ՍՊԲ, 1879, էջ 36:

Թագաւորին (ԸԻԼԿՀՂՄՊՓՄՆ) մոգուց Գասպարայ, եւ սուրբ Վարդանայ, եւ սուրբ Կանանց վանքն, որ այս մասին սուրբ Խաչ (ԶԷԼԻԿՀՂՄՊՓՄՆ), ուստի էր Անանիա կաթողիկոսն Մոկացի»<sup>51</sup> :

Նա նաև մանրամասներ է հաղորդում մանուկ Հիսուսի ճանապարհորդութեան մասին դեպի Եգիպտոս. «Եգիպտոս Մարէ, ուր գնաց տէրն (ԶԷԼԻԿՀՂՄՊՓՄՆ) Քրիստոս փախստական, եւ փախստական արար զչարութիւն ազգին Եգիպտացոց, մանուկ մատաղն Քրիստոս (ԶԷԼԻԿՀՂՄՊՓՄՆ) արկեալ զձեռն իւր ի ծակ իծին: Զի յանկանելն սատանային ի փառացն՝ անդ եղ զաթոռն իւր. այլ ի գնալն Քրիստոս ի կործանեցաւ աթոռ նորա եւ ծաղկեցաւ (ԲԳԳԵԶԷԼԹԺԻԾՎԻԾՎԻԾՂՄՊՓՄՆ) անապատն Եգիպտոսի իբրև զգրախտն (ԲԵԺԷԼԹԺԻԾՎԻԾՂՄՊՓՄՆ) Աստուծոյ (ԲԵԶԷԼԹԺԻԾՎԻԾՂՄՊՓՄՆ): Հերմուպոլիս մօտ է Եգիպտոսի, եւ զառաջինն անդ գնաց Քրիստոս ի տուն այրի կնոջն, զոր լուաց եւ պատեաց շարմանդով. եւ ասաց. «Նման է մայր քո Արուսեկի եւ դու նման՝ արեգականնէ, եւ այլ բազում գովասանութիւն ետ (ԶԷԼԻԿՀՂՄՊՓՄՆ) նմա (ԶԷԹ): Եւ Զ ամայ Եգիպտոս եկաց (ԲԶԷԼԹԺԻԾՎԻԾՂՄՊՓՄՆ) Քրիստոս (Ղ) Տէրն (ԶԷԼԹԺԻԾՎԻԾՂՄՊՓՄՆ) մեր (Ղ): Եւ զլուաց մանչուրն, զոր թափեաց սուրբ Աստուածածինն անդ բուսած առն եւ տունկն պալասանի (ԲԶԷԼԹԺԻԾՎԻԾՂՄՊՓՄՆ)»<sup>52</sup> :

Հնարավոր է, որ Գիր Տղայութեան պարականոնն իր մեջ ներառել է այնպիսի գաղափարներ, որոնք բոլորովին էլ խորթ չեն եղել Հայ եկեղեցու դավանաբանութեանը: Ինչպես օրինակ Աղերս Եւթաղի<sup>53</sup> , Հանգիստ Հովհաննու<sup>54</sup> և Առ Կորնթացիս Գ թուղթը<sup>55</sup> , որոնք երկար ժամանակ հայկական ձեռագրերում

<sup>51</sup> Աշխարհացոյց Վարդան Վարդապետի, Բնն. հրատարակություն, Փարիզ, 1960, էջ 41:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 65-66:

<sup>53</sup> Տե՛ս Օ. Սեֆոպ, Նոր Կտակարանի գրքերու կարգը Հայոց մեջ, Վիեննա, 1949, էջ 84-85:

<sup>54</sup> Հովհաննու Հանգիստը մշտապես հաջորդել է Հայտնութեանը, Քահանայաթաղի արարողությունների վերջում «խնդրեցում» ֆարոզից հետո ընթերցվում է Հանգիստը. «Նւ ֆարոզէ. «Վասն գտանելոյ: Եւ զկնի ընթեռնու զաղաթս եւ զՀանգիստն երանելոյն տեառն Յոհաննու եւ աւետարանչի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», տե՛ս Մայր Մաշտոց, աշխատասիրությանը Գ. Տէր-Վարդանեանի, էջմիածին, 2012, էջ 486: Այն անցյալում հարգի է եղել, գրվել են մեկնություններ (Ներսես Լամբրոնացի): Հանգիստ Հովհաննու մասին մանրամասն տե՛ս Հ. Վրդ. Գաբրելեան, Հանգիստ երանելոյն Յովհաննու, ստուգեալ իբրև վաւերական, Վիեննա, 1877, էջ 5:

<sup>55</sup> Տե՛ս B. Metzger, *The Canon of the New Testament, Its Origin, Development, and Significance*, New York, Oxford press, 1987, p. 176: Այս պարականոն գրությունը, որ մաս է կազմում Պողոսի Գործքի, իր մեջ ներառում է Կորնթացի հոգևորականների՝ Պողոս առաքյալի երկրորդ թղթի համառոտ պատասխանը և «Պողոս առաքյալի երրորդ թուղթը կորնթացիներին»: Թարգմանվելով հայերեն և ասորերեն լեզուներով՝ այն մաս է կազմել այս եկեղեցիների կողմից ընդունված գրքերի: Այս մասին մանրամասն տե՛ս նաև Հայկական աշխատասիրութիւնը հայագէտ Պ. Ֆեթթերի, քարգմ. և ծանոթ. Հ. Տաշյանի, 1895, Վենետիկ, էջ 142-193: «Կ. Պրոֆ. Ֆետտերի հրատարակութիւնները Առ Կորնթացիս երրորդ տարականոն թղթի մասին», Կ. Վ., Արարատ, 1895, էջ 382-384: Սարկավագի և Տաթևացու կանոնի մեջ, ինչպես նաև ձեռագիր Աստվածաշունչների մեջ Կորնթացիներին ուղղված Պո-

Աստվածաշնչի անբաժանելի մաս են կազմել: Կանոնական չլինելով հանդերձ, վերջիններս արժարժեկ են Հայ եկեղեցու դավանաբանության ինչ-ինչ գաղափարներ: Ասվածի լավագույն ապացույցն է Կորնթացիների Գ թուղթը, որը Հայ եկեղեցու կողմից ընդունվել է այնտեղ առկա ուսմունքի շնորհիվ, ըստ որի Հիսուսը հարություն է առել մարմնով ու երկրորդ գալուստը նույնպես լինելու է մարմնով: Մեր եկեղեցին տեղյակ է եղել որոշ գրքերի շուրջ ծավալված վեճերին ու հակաճառություններին, այդ իսկ պատճառով էլ բացատրություններ են արձանագրվել ի նպաստ կատարված ընտրության: Օրինակ, Կորնթացիների Գ թղթի թարգմանողը թարգմանել է նաև եփրեմ Ասորու՝ նույն թղթի մեկնությունը<sup>56</sup>: Գիր տղայութեան ավետարանը նույնպես կարող էր ծառայել հիմնավորելու Հիսուսի լիակատար մարդկային բնությունը<sup>57</sup> և կարող էր մեծապես կիրառվել հատկապես այն ժամանակ, երբ հայերին մեղադրում էին եվտիֆական կամ հուլիանական աղանդներին հարելու մեջ:

Ջատագովական նկատառումներով Հայաստան բերված այս գրքում նկարագրված եվայի և Հիսուսի հանդիպումը պիտի հատուկ, հավատաստուցողական նպատակ ունենար<sup>58</sup>: Թեև եվան չի մասնակցում Մարիամի ծննդաբերությանը, այնուամենայնիվ նա է բարուրում Հիսուսին, ինչը նորկտակարանյան ավետարաններում վերագրվում է Մարիամին: Նման տարբերությունը կանոնական ավետարաններից, ըստ Ի. Դորֆմանի, բերում է այն հնարավոր եզրահանգմանը, որ Տղայութեան ավետարան-ը սնվել է ավելի վաղ աղբյուրից, որտեղ աղբյուրը կատարվում էր ոչ այնքան Մարիամի և առաջին կնոջ՝ եվայի միջև, այլ Մարիամի և Հիսուսի, որն այստեղ հանդես է գալիս որպես նրա սկզբնատիպ: Աստվածաբանական այս հարցի նման մոտեցումը ենթադրել է

---

ղոսի երոզ թուղթը Սարկավագը դիտարկում է որպես երկու առանձին գրություններ՝ «Թուղթ Կորնթացոցն առ սուրբ առաքելայն Պաղոս» և «առ Կորնթացիս թուղթ երոզոզ»: Ոմանց մոտ վերնագիրն այլ անուն ունի՝ «Պաղոսի թուղթ ի բանտն առ Կորնթացիս ընթերցմունք»: Կորնթացիների Գ թուղթը ձեռագրերում երբեմն հաջորդում է երկրորդ թղթին, երբեմն էլ դրվում է Պողոս առաքյալի տասնչորս թղթերից հետո, **Շահե աբ. Աճեմեան**, *Յուցակ Աստուածաշունչ մատենի հայերէն ձեռագրերուն*, Կիզպոն, 1992, էջ XCIX-CI:

<sup>56</sup> **Th. Zahn**, «Der apokryphe Briefwechsel zwischen Paulus und den Korinthern, Թղթակցութիւն Պաղոսի եւ Կորնթացոց եւ Մեկնութիւն եփրեմի», քարգւ. 2. **Տաշեանի**, *Հանդէս Ամսօրեայ*, 1891, էջ 218: Տե՛ս նաև՝ *Սրբոյն եփրեմի մատենագրութիւնք*, հտ. 3, «Մեկնութիւն Չորեմասան թղթոցն Պաղոսի», Վեմեաիկ, 1836, էջ 116-123;

<sup>57</sup> Ըստ որոշ աղբյուրների՝ մոզերը եկել են այն երկրից, որտեղ ապրել են նեստորականների նախնիները, տե՛ս *Christians under the Chresent in Asia*, by **the Rev. E. L. Cutts, B. A.**, London, p. 169. Պատահական չէ, որ Հիսուսի մարդկային բնությունը հատկապես շեշտվում է «Վասն գալստեան մոզոցն ընծայիմ յերկրպագութիւն նորածին մանկանն Յիսուսի» խորագիրը կրող հատվածում, տե՛ս **Ե. Տայեցի**, *Իշխ. աշխ.*, էջ 50:

<sup>58</sup> Մարիամի և Հիսուսի ծննդյան պատմությանը մանրամասն անդադարձել ենք մեր նախորդ հոդվածում, տե՛ս **Մ. Մամյան**, «Հակոբոսի նախաավետարանը», *Հայ աստվածաբան, գիտական հոդվածների ժողովածու*, Ե, Եր., 2013, էջ 21-37:

տալիս, որ ինչպես եվան, որ առաջացել է Ադամից, նրա հետ կիսուս է նրա նույն էությունը, այնպես էլ Քրիստոսը նույն ձևով իր բնությունը ստացել է Մարիամից<sup>59</sup>:

### Мари Мамян Армянское “Евангелие детства”

По словам Армянского летописца Самуэла Анеци (около 1179), в 591 году в Армению прибыло несколько миссионеров-несториян, которые привезли с собой апокрифические книги. Со временем эти миссионеры были выселены, тем не менее, некоторые из их книг были переведены на армянский язык. Самуэл представляет список этих апокрифических сочинений, но в настоящее время только два из них можно найти в армянских библиографических списках. Один из сохранившихся апокрифов – так называемое “Евангелие Детства”, представляющее большой интерес. Этот апокриф упоминает историк тринадцатого века Мхитар Айриванеци, который считается составителем списка неканонических писаний. Он встречается и в других списках апокрифов, которые образуют главный источник знаний о потерянных произведениях.

“Евангелие Детства” впоследствии было переработано армянскими редакторами и, несмотря на то что считалось еретическим, было очень популярно среди армян и на протяжении веков продолжало копироваться, никогда не теряя влияния на средневековую культуру.

### Mari Mamyan The Armenian “Gospel of the Infancy”

According to Armenian chronicler Samuel of Ani (ca. 1179), some Nestorian missionaries came to Armenia in 591 and brought with them apocryphal books. These missionaries were eventually evicted, but some of their books managed to be translated into Armenian. Samuel of Ani gives the list of these apocryphal writings but nowadays only two of

<sup>59</sup> **И. Дорфман-Лазарев**, “Возвращение в рождественскую пещеру: Память первоизданного человечества в армянском Писании о детстве Господними в родственных источниках,” *Miscellanea Orientalia Christiana, Восточнохристианское разнообразие*, редакторы **Н. Селезнев, Ю. Аржанов**, Москва, 2014, сс. 160-161. Պարականն գրականության մեջ բացի Ադամ-Քրիստոսու հարաբերակցությունից, ակնառու է նաև եվա-Մարիամ խորհրդանշական հարաբերակցությունը, տե՛ս **Հ. Քյուսեյան**, *Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության*, Ս. Էջմիածին, 1995, էջ 12. Մահ Ադամյալ:

these books are to be found in Armenian bibliography. One of the preserved apocrypha is so-called “The Gospel of the Infancy”, which is of great interest at the present case. This apocryphon was mentioned by the thirteenth-century historian Mekhit'ar of Ayrivank' who is supposed to be the compiler of a list of apocryphal writings. It also occurs in other lists of apocrypha, which form the main source of knowledge about the lost writings.

The “Gospel of the Infancy” was later reworked by Armenian editors and in spite of being considered as heretical, it was very popular among Armenians and had been copied for centuries never losing its influence on medieval culture.